ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,

«Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց»ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Ուսուցիչ՝ Արտակ Խաչատրյան

Անցկացման վայր՝ Վարդենիս

Ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Դպրոց՝ Կարճաղբյուրի միջնակարգ դպրոց

2022

Բովանդակություն

Ներածություն.....2

Գլուխ **1 .** Արժեքային համակարգ

1.1«Արժեքային համակարգ» հասկացությանը ընդհանուր բնութագիրը.....6

1.2 Արժեքային համակարգի ձևավորման խնդիրներ.....6

Գլուխ **2.** Արժեքային համակարգի ձևավորումը

2.1 Արժեքային համակարգի ձեւավորման կարևորությունը 7

2.2 Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոնները .....9 **2.3** Արժեքային համակարգի ձևավորման առանձնահատկությունները **11**

Եզրակացություն.....18 Օգտագործված գրականության ցանկ.....20

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության, պատմության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ, ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Ազգային արժեքները չառանձնացնելով համամարդկայինից՝ ուսուցիչն, այնուամենայնիվ, ուսուցման ընթացքում չի կարող չընդգծել միայն հայ մարդուն և հայոց հողին բնորոշ շատ արժեքներ, որոնց շնորհիվ պահպանվում են հայ մարդու դիմագիծն ու ազգային պատկանելությունը: Կան միայն հայկական խորհրդանիշներ, որոնց կրողն ու շարունակողը հայ երեխան պիտի լինի: Այդ խորհրդանիշները պիտի որոնել և՛ հայոց լեռների ու ջրերի, և՛ ավանդույթների ու ծեսերի, և՛ քարի ու քարեղեն մարմնացումների, և՛ հողի ու ծառի մեջ: Հայ դպրոցականի արժեքային համակարգի ձևավորման գործում կարևոր է քարի, հողի, ջրի, Արարատ լեռան, մայր Արաքսի, սրբազան Արածանիի, հայոց խաչքարերի, մամռակալած վանքերի ու եկեղեցիների հանդեպ ակնածանքի, հիացումի, հպարտության զգացումների սերմանումը: Արժեքային համակարգի սաղմերը «Սասնա ծռեր» դյուցազներգության հերոսների բարոյական նկարագրի մեջ են խտացված: Ազնվություն, վեհանձնություն, ճշմարտություն,

ազատասիրություն ու հայրենասիրություն – ահա այն բարձր գաղափարները, որոնք հատուկ են հայ մարդուն, և որոնցով նա հավասար իրավունքներով իր տեղն է զբաղեցնում համամարդկային արժեքներով հարուստ կլոր սեղանի շուրջ նստած աշխարհի մյուս ժողովուրդների կողքին: [1]Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների հյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

[2]Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին: Չ՞է,որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը :

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է , որ կրթության գենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Արդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրաքանչյուր ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի

[1] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:
[2] Ղուկասյան Ա.,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:էջ 5-6

ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Բոլոր աշակերտները մտածողությամբ, վարքով, գիտելիքներով, արժեքային համակարգով ուսուցիչների բրտնաջան աշխատանքի արդյունք են:Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Գլուխ 1 . Արժեքային համակարգ

1.1 «Արժեքային համակարգ» հասկացությանը ընդհանուր բնութագիրը

Անհրաժեշտ է պարզ գիտակցել , որ դպրոցի նպատակը հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարքը խարխլված է, իսկ արժեքները խեղաթյուրված, շատ աշակերտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն վարքի բարոյական մոտիվների իսկական արժեքի մասին, չեն գիտակցում դրանց դերը իրենց ուղին ընտրելիս, մեծամասամբ հյութապաշտ են: Արդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրաքանչյուր ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի հյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

1.2 Արժեքային համակարգի ձևավորման խնդիրները

Որպեսզի առարկան յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա անհրաժեշտ է՝

· դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ · խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն,

· յուրաքանչյուր իմացական փորձ անհրաժեշտ է լուծել նաև դաստիարակչական խնդիրներ:

Ուսումնական գործընթացը նախատեսում է տեսական նյութի ուսումնասիրություն, հետազոտական, նախագծային աշխատանքներ, ցուցադրումներ, լաբորատոր աշխատանքներ: Սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն են ուղղված տարբեր թեմաներով սեմինարների,բանավեճերի կազմակերպումը, ուսումնասիրվող թեմաներին վերաբերող գիտահանրամատչելի ֆիլմերի դիտում ու քննարկումը:

Գլուխ 2 Արժեքային համակարգի ձևավորումը

2.1 Արժեքային համակարգի ձևավորման կարեւորությունը

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով,որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային,համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կար առաջարկ՝ ինչպիսի արժեքային համակարգ ենք ուզում ունենալ հանրակրթական դպրոցում: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Ճիշտ է, այսօր մենք մի քիչ շփոթված ենք, որովհետև աշխատանքը համարժեք չի գնահատվում: Բայց միևնույն է, մեզնից յուրաքանչյուրը իր աշխատանքը պետք է պատշաճ կատարի: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակեն սանին, օրինակ ծառայեն, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Ոչինչ, որ նրանք երբեմն ժամանակակից լինելու համար երևութական պատմուճաններ են հագնում, երբեմն աղավաղում են որոշ ազգային արժեքներ, երբեմն էլ աղավաղված հայերենով են խոսում: Նրանց զգալի մասը տառապում է օտարամոլությամբ: Երբ ներքին հարստություն ձեռք բերեն, նրանք կհասկանան իրենց սխալը, և դա անպայման կուղղվի: Այսօր նրանք մի քիչ մոլորված են, անցման շրջանի մոլորություն է. չէ՞ որ կյանքում շատ արմատական փոփոխություններ, ճգնաժամաններ եղան, ու հիմա նրանցից յուրաքանչյուրը պիտի գտնի իր արահետը: Եվ բոլորը չէ, որ ի վիճակի են դա անել: Մենք նրանց պետք է ուղղորդելով առաջնորդելով սովորեցնենք: Բարոյական վակուում չի լինում, եթե որոշ արժեքներ կորցրել ենք, փոխարենը ուրիշ արժեքներով պետք է դաստիարակենք, իսկ դա պետք է մենք անենք, մենք բոլորս համատեղ՝ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, բուհը, բանակը: Գարեգին Նժդեհն ասում էր՝ «Տո՛ւր հայ մորը թեկուզ քիչ բան, բայց պահանջիր ամեն ինչ, և նա կանի: Տո՛ւր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնորհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը» : Հանրակրթական դպրոցում ուսուցանվող ցանկացած ուսումնական բնագավառ սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում որոշակի մասնաբաժին ունի: Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Կիրթ ու բարձր արժեքային համակարգ ունեցող հանրությանը դժվար է գոհացնել ու խաբել: Հանրության մշակութային, արժեքային, կրթական մակարդակից է պրոյեկտվում հանրային կառավարման սուբյեկտների որակը: Աշակերտների հետ աշխատանքում կիրառվում են բազմաթիվ հնարներ, ձևաչափեր ու միջոցներ՝ դաստիարակելու համար այնպիսի արժեքներ, ինչպիսին են փոխօգնությունը, դիմացինի կարծիքի

հետ հաշվի նստելը, նոր մտքերի ու մոտեցումների առջև բաց լինելը, ուրիշի մտքերը և աշխատանքը գնահատելն ու չգողանալը, ճշտապահ և պատասխանատու թիմի անդամ լինելը, որոշումներ կայացնելիս բարեհոգության և հարուստ տեղեկությունների վրա հիմնվելը:Արժեքային համակարգի ձևավորումը կրթության հիմնախնդիրներից է: Մեր նպատակն է ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի: Դասը պլանավորել այնպես,որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի, մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում:

2.2 Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոնները

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոնը տարիքային է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է :

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության,

սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ բարշ են տալիս իրենց ետևից»: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

2.3 Արժեքային համակարգի ձևավորման առանձնահատկությունները

Առհասարակ դեռահասության տարիքը ընդունված է համարել դժվար շրջան, քանի որ այս տարիքում են ձեւավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի եւ առհասարակ առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասն սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, սկսում է հաճախ նրանց հակառակվել, նկատել նրանց մեջ բացասական գծեր, որոնք մինչ այդ չէր նկատում, ձգտում է ինքնուրույնության եւ ինքնահաստատման, մյուս կողմից նրա համար շատ ավելի արժեքավոր է դառնում իր տարեկիցների կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունված նորմերին : Դեռահասության փուլում բավական լրջորեն է ընթանում անձի հիմնարար արժեքների ձեւավորման գործընթացը, դեռահասն իրականացնում է արժեքների ընտրություն, այդ թվում նաեւ՝ հոգեւոր: Սեփական պատկերացումների եւ արժեքային համակարգի ձեւավորման գործում նշանակալի է համընդհանուր այն արժեքների դերը, որոնք ունեն լայն կիրառություն եւ բնորոշում են մարդուն՝ որպես անհատի: Դեռահասի համար էական նշանակություն ունի հասակակիցների կարծիքը սեփական անձի եւ գործունեության վերաբերյալ: Հետեւելով հասակակիցներին՝ նա կրկնօրինակում է նրանց, սկսում է իր մեջ զարգացնել ընկերների շրջանում առավել գնահատված որակներ: Տեղի է ունենում այսպես կոչված արժեքների վերագնահատում, ձեւավորվում բարոյագեղագիտական արժեքների նոր համակարգ: Ընդ որում, շատ հաճախ այդ արժեքներն ավելի կարեւոր նշանակություն են ստանում դեռահասի համար, քան մեծահասակների մեջ առկա արժեքները: Արժեքային համակարգի ձեւավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Բնագիտություն առարկայի յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսեւորումների միաժամանակյա եւ փոխկապակցված մոտեցում: Երբեմն աշակերտները միմյանցից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Վերջին տարիներին խրարուսվում են նմանօրինակ դասերի վարման եղանակները, բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր դասերին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու դասն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ դասին համապատասխանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու աշակերտների կարողությունները, քանի որ յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է կիրառել սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում: Այս և նմանօրինակ խնդիրներից զերծ մնալու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ հստակ տիրապետի առարկայական չափորոշչային պահանջներով ներկայացվող պահանջներին, իմանա սոցիալական հմտությունների եւ արժեքային համակարգի կշիռն ու դերը յուրաքանչյուր դասապրոցեսին անհատապես: Միջառարկայական կապերը հզոր խթան են հանդիսանում ոչ միայն գիտելիքի յուրացման, կարողությունների , հմտությունների ձեռք բերման,այլեւ կայուն արժեհամակարգի ձեւավորման համար: Արժեքային համակարգի ձեւավորումը խիստ կարեւոր է ցանկացած առարկա դասավանդելիս: Կարծում եմ, որ կիրառելով միաժամանակ

ավանդական ու նոր ինտերակտիվ մեթոդները, կարելի է ապահովել բարձր արդյունավետություն ցանկացած առարկայի դասավանդման մեջ: Բնագիտության ժամերին պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում ՝ կենցաղ, էկոլոգիա,առողջության պահպանում, շրջակա միջավայրի պահպանում, անվտանգության տեխնիկա օգտագործելու կարողություն: Դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա որպես գիտության գործառության որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը, խոր համոզմունքով , հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն բնագիտության ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը: Ցանկացած դասաժամի ուսուցիչը պետք է մտածի, թե ինչպես ձևավորել կրթության կարևոր հիմնասյուններից մեկը՝ արժեհամակարգը: Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով առարկայի բովանդակությունը կառուցվում է նաև մի շարք ընդհանրական խաչվող հասկացությունների հենքի վրա: Դրանք առանցքային հասկացություններ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում: Այդ հասկացությունները պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների ուսուցման ժամանակ: Առարկայի բովանդակությունը պետք է լիարժեք հնարավորություն ընձեռի սովորողների կողմից տարատեսակ հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ այնպիսի ընդհանրական հմտությունների ձևավորմանը: Ուսումնական գործընթացը նախատեսում է տեսական նյութի ուսումնասիրություն, հետազոտական, նախագծային աշխատանքներ, ցուցադրումներ, լաբորատոր աշխատանքներ: Սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն են ուղղված տարբեր թեմաներով սեմինարների, բանավեճերի կազմակերպումը, ուսումնասիրվող թեմաներին վերաբերող գիտահանրամատչելի ֆիլմերի դիտում ու քննարկումը: Դասընթացում կարևորվում է սովորողների կողմից ժամանակակից տեղեկատվական , հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը՝ բնության տարբեր երևույթները դինամիկ զարգացման մեջ դիտելու, վիրտուալ դիտումներ փորձեր իրականացնելու համար: Այսպիսով կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է եւ մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

[3]ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է ,որ

- դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային–պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային արժեքներով:

[4]Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1. Սովորողներին զինել հին,միջնադարի,նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

---

[3] Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում էջ 39:
[4] Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 12

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակութին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ,խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել,թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիրակել խորը հայրենասիրություն ,ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է

[5]9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

[5] Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 դդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 14

11. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը,սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:
- Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու , ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու,վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:
- Ձևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու , վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ
- . Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի,ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ
- Զարգացնել սովորողների զգայական ընկալման,մտավոր ը հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն,կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում,համադրում ը այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Հայոց պատմության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան: Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Ելնելով վերը նշվածից, կարող ենք եզրակացնել, որ՝ Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Մարդկային քաղաքակրթությունն իր զարգացման ցանկացած փուլում ունեցել է իր արժեքային համակարգը: Այս առումով կարելի է պնդել, որ յուրաքանչյուր արժեքային համակարգ համապատասխանում է հասարակության զարգացման որոշակի մակարդակին: Առկա է նաև հակադարձ կապը, երբ զարգացումն իր հերթին փոփոխություններ է մտցնում արժեքային համակարգի շարժման մեջ: Այսպիսով այս առարկայի դասավանդումը դպրոցում նպաստում է սովորողների մոտ աշխարհայացքի, աշխարհի ամբողջական գիտական պատկերի ձևավորմանը: Մարդու բարոյական վարքի դաստիրակումը շրջակա կիրք ու բարձր արժեքային համակարգ ունեցող հանրությանը դժվար է գոհացնել ու խաբել: Հանրության մշակութային, արժեքային, կրթական մակարդակից է պրոյեկտվում հանրային կառավարման սուբյեկտների որակը միջավայրի նկատմամբ: Այդ պատճառով է , որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող արժեքները: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ

անելիքներ ունի նաև դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այսօրվա սերունդը պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:

2. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002:

3. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:

4. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.:

5. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:

6. Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում:

7. Համացանց

Դասապլան 1

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Խաչատրյան Արտակ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն	ԱՄՍԱԹԻՎԸ՝ 4.03.2023	ԿԻՍԱՄՅԱԿ՝ 1	ԴԱՍԱՐԱՆ՝ 6
ԹԵՄԱ	Մեծ Հայքի թագավորությունը վերջին Արտաշեսյանների օրոք (Արտաշեսյան թագավորության անկումը)		
Օգտագործվող նյութեր	6-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագիրք, քարտեզ		
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	• Ամրապնդել գիտելիքները կապված տվյալ պատմական շրջանի հետ • Մտապահել կարևոր իրադարձությունները • Ապահովել բոլոր աշակերտների մասնակցությունը դասին • Նշել Արտաշեսյան թագավորության անկման պատճառները • Կարողանալ եզրակացություն կատարել տրված թեմայից		
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասերից արդեն ծանոթ են Արտաշեսյան թագավորության հիմնադրմանը, գահակալներին, պետական կարգին: Այս դասի ընթացքում կուսումնասիրեն, թե ինչու և ինչպես անկում ապրեց Արտաշեսյան թագավորությունը, կարողանան արտահայտել իրենց կարծիքները, տեղի կունենա կարծիքների բախում և վերջում ամբողջական կարծիք կկազմեն Արտաշեսյան թագավորության մասին և կստանան հիմնարար գիտելիքներ:		
Ուսուցման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ			
Վերջնարդյունք	• Աշակերտները կկարողանան համեմատական եզրեր անցկացնել ինչպես Վանի, այնպես էլ Երվանդունիների և Արտաշեսյան արքայատոհմի պետական կարգի, բանակի, գահակալների , ռազմավարության մասին • Ամբողջությամբ յուրացնել Արտաշեսյան արքայատոհմի հաստատումը, վերելքը և անկումը		
Ուսուցչի զարգացման թիրախներ	Համագործակցության, հարց և պատասխանի, քննարկումների միջոցով ապահովել աշակերտների առավելագույն ներգրավածություն		
Ռազմավարություն	Կազմակերպել խմբային աշխատանք՝ արձանագրելով աշակերտների նյութի յուրացման աստիճանը		

ԴԱՍԻ ՓՈԻԼԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ԴԱՍԻ ՓՈԻԼԵՐԸ	ԺԱՄԱՆԱԿԸ /րոպեներով/	ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԱՇԱԿԵՐՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Առանցքային հարցեր
ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՓՈԻԼ (ներածություն, մուտք)	5-7 րոպե	Կատարել՝ 1. մատյանի գրանցում 2. աշակերտների հաշվառում 3. կազմակերպչական աշխատանք		
ԽԹԱՆՄԱՆ ՓՈԻԼ (մոտիվացիա)		• Հիշեցնել անցած նյութերը , լսել կարծիքներ • բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները • ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց նյութի քննարկման մեջ աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում	Վերհիշում են անցած նյութը և պատասխանում են հարցերին	

ՀԻՄՆ ԱԿԱՆ ՄԱՍ ԿԱՄ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈԻԼ	20-25 րոպե	ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈԻԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝ 1. սովորողների հետաքրքրության պահպանումը 2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը 3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը -հաղորդում է հիմնական տեղեկատվությունը, կազմակերպում է աշխատանքը	-լսում է, ինֆորմացվում է	Որո՞նք էին Արտաշեսյան արքայատոհմի անկման հիմնական պատճառները:
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ ԿԱՄ ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈԻԼ	7-10 րոպե	ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈԻԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝ 1. իրենց ստացած տեղեկատվությունը կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով 2.նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում 3. հստակ մտապահեն կարևոր իրադարձությունները - ճշգրտում, աջակցում, ուղղորդում	-աշխատում է, կատարում է առաջադրանքը, կշռադատում է, եզրահանգումներ անում, մտապահում	Ի՞նչ քաղաքական իրավիճակ էր Հայաստանում: Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանում Արտաշեսյանների գահակալության օրոք:
ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	3 րոպե	Հանձնարարել գրավոր պատասխանել հարցերին և դուրս գրել կարևոր իրադարձությունները,	-ճշում է առաջադրանքները, լսում է բացատրությունը	

Դասապլան 2

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Խաչատրյան Արտակ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն	ԱՄՍԱԹԻՎԸ՝ 08.09.2022	ԿԻՍԱՄՅԱԿ՝ 1	ԴԱՍԱՐԱՆ՝ 9
ԹԵՄԱ	Հայոց անկախ պետության կայացումը		
Օգտագործվող նյութեր	9-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագիրք		
ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	• Վերհիշել նախորդ տարվա նյութը • Մտապահել դասի կարևոր իրադարձությունները • Ապահովել բոլոր աշակերտների մասնակցությունը դասին • Նշել անկախացման գործընթացին նպաստող գործոնները • Կարողանալ եզրակացություն կատարել տրված թեմայից		
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ տարվա նյութից արդեն ծանոթ են ինչպիսի իրավիճակ էր ստեղծվել Հայաստանում: Այս դասի ընթացքում կուսումնասիրեն, թե ինչը նպաստեց Հայաստանի անկախացմանը, որ գործիչները զբաղվեցին այս խնդրով և ինչ իշխանության մարմիններ ստեղծվեցին:		
Ուսուցման արդյունքները, որոնք կվաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ			
Վերջնարդյունք	• Աշակերտները կսովորեն, թե ինչպես և ինչպիսի պայմաններում է սկիզբ դրվել Հայաստանի Հանրապետությանը • Ամբողջությամբ կյուրացնեն հայոց անկախ պետության սկզբնավորման գործընթացը		
Ուսուցչի զարգացման թիրախներ	Համագործակցության, քննարկումների, հարց և պատասխանի միջոցով ապահովել աշակերտների առավելագույն ներգրավածություն		
Ռազմավարություն	Կազմակերպել խմբային աշխատանք՝ արձանագրելով աշակերտների նյութի յուրացման աստիճանը		

ԴԱՍԻ ՓՈԻԼԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ԴԱՍԻ ՓՈԻԼԵՐԸ	ԺԱՄԱՆԱԿԸ /րոպեներով/	ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԱՇԱԿԵՐՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Առանցքային հարցեր
ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՓՈԻԼ (ներածություն, մուտք)	5-7 րոպե	Կատարել՝ 1. մատյանի գրանցում 2. աշակերտների հաշվառում 3. կազմակերպչական աշխատանք		
ԽԹԱՆՄԱՆ ՓՈԻԼ (մոտիվացիա)		• Հիշեցնել անցած նյութերը , լսել կարծիքներ • բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները • ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց նյութի քննարկման մեջ աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում	Վերհիշում են անցած պատմական նյութերը և պատասխանում են հարցերին	

ՀԻՄՆ ԱԿԱՆ ՄԱՍ ԿԱՄ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈԻԼ	20-25 րոպե	ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈԻԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝ 1. սովորողների հետաքրքրության պահպանումը 2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը 3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը -հաղորդում է հիմնական տեղեկատվությունը, կազմակերպում է աշխատանքը	-լսում է, ինֆորմացվում է	Ինչպիսի՞ պայմաններում հիմք դրվեց հայոց անկախ պետության ստեղծմանը: Ի՞նչ իրադարձություններ նպաստեցին դրան:
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ ԿԱՄ ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈԻԼ	7-10 րոպե	ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈԻԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝ 1. իրենց ստացած տեղեկատվությունը կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով 2.նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում 3. հստակ մտապահեն կարևոր իրադարձությունները - ճշգրտում, աջակցում, ուղղորդում	-աշխատում է, կատարում է առաջադրանքը, կշռադատում է, եզրահանգումներ անում, մտապահում	Ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան: Ինչպե՞ս ձևավորվեցին իշխանության մարմինները: Ինչպե՞ս կազմավորվեց բանակը:
ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	3 րոպե	Հանձնարարել գրավոր պատասխանել հարցերին և դուրս գրել կարևոր իրադարձությունները,	-ճշում է առաջադրանքները, լսում է բացատրությունը	